Հավելված թիվ 14
Ռուսաստանի ԴՄԾ-ի 2012 թվականի
դեկտեմբերի 17-ի հրամանի թիվ 2546

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիա

ՈՐՈՇՈՒՄ

7 դեկտեմբերի 2012 թվականի **թիվ 6/14**

քաղ. Ալմաթի

Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից մաքսային փորձաքննության ուղարկվող ապրանքների փաստաթղթերի ցանկի մասին

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

Ռուսաստանի ԴՄԾ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին եւ Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին՝ ղեկավարվել մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից մաքսային փորձաքննության ուղարկվող ապրանքների փաստաթղթերի ցանկով (կցվում է):

Նախագահ՝ Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝ Մ. Տ. Յեսենբաեւ

Բելառուսի Հանրապետության
ՊՄԿ-ի նախագահի տեղակալ,
Միավորված կոլեգիայի անդամ՝ Ս.Վ. Բորիսյուկ

Հավելված

Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային ծառայությունների միավորված
կոլեգիայի թիվ 6/14 որոշման

Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից մաքսային փորձաքննության ուղարկվող ապրանքների փաստաթղթերի ցանկը

1. Ներկայացվող փաստաթղթերի մատնանշմամբ ուղեկցող նամակը, էջերի քանակը (անհրաժեշտության դեպքում):

2. Մաքսային փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, բնօրինակը:

3. Ապրանքի փորձանմուշների եւ նմուշների ընտրության ակտը, բնօրինակը՝ ըստ «Մաքսային փաստաթղթերի ձեւերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 260 որոշման մեջ շարադրված ձեւի:

4. Ապրանքների մասին հայտարարագրի պատճենը՝ ըստ «Մաքսային հայտարարագրերի լրացման ցուցումների եւ մաքսային հայտարարագրերի ձեւերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշման մեջ շարադրված ձեւի:

5. Առեւտրային փաստաթղթերի պատճենները (հաշիվ-ապրանքագրեր (ինվոյս), պայմանագիր, մասնագրեր, բեռնառաքման եւ փաթեթավորման թերթիկներ):

6. Ապրանքի ծագման, համապատասխանության եւ որակի սերտիֆիկատների (որակի սերտիֆիկատ, անվտանգության (որակի) անձնագիր, վերլուծության սերտիֆիկատ, որակի հավաստագիր կամ պատրաստողի նամակներ)՝ օրենսդրությանը համապատասխան հաստատված պատճենները:

7. Բնօրինակի հիման վրա պատրաստված արտադրատեսակի տեխնիկական անձնագրի եւ դրա թարգմանության պատճենները:

8. Բացթողնվող արտադրանքի (ապրանքի) տեխնիկական պայմանները (կանոնակարգ) կամ ձեռնարկության ստանդարտը:

9. Գծագրերի, հավաքման սխեմաների պատճենները, ապրանքի հիմնական տեխնիկական առեւտրային բնութագրերը:

10. Սեղմասկավառակի վրա վիդեոֆիլմը (առկայության դեպքում), ապրանքի (այդ թվում՝ պիտակների, ապրանքի վրա գրառումների) լուսանկարները:

11. Այլ փաստաթղթեր: